

Գիտության ո՞ր ուղղություններով է ծախսվելու ավելացված 2 մլրդ 784 մլն դրամը. Արթուր Մովսիսյանը մանրամասներ է ներկայացնում



Կառավարությունն այսօրվա նիստում որոշեց գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ծրագրերի միջոցառումների իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները (շուրջ 13 մլրդ 104.5 մլն դրամ) ավելացնել 2 մլրդ 784 մլն դրամի չափով:

Ավելացվող միջոցներն ուղղվելու են երկու հիմնական ոլորտների՝ ենթակառուցվածքի արդիականացման ծրագրերին (1 մլրդ 32 մլն դրամ) եւ թեմատիկ գիտական հետազոտություններին (1 մլրդ 638 մլն դրամ):

Գիտության կոմիտեի նախագահի տեղակալ **Արթուր Մովսիսյանը** մեզ հետ զրույցում մանրամասնեց, որ ենթակառուցվածքի արդիականացման ծրագրերին հատկացվող միջոցները ուղղվելու են ավելի բարձր արդյունավետություն ունեցող գիտական կազմակերպությունների համար գիտական ժամանակակից եւ կարելորագույն նշանակություն ունեցող սարքավորումների ձեռքբերմանը, ինչպես նաեւ այդ սարքավորումների վրա հետազոտական աշխատանք իրականացնող անձնակազմի վերապատրաստմանը:

Նրա խոսքով՝ գիտական ժամանակակից սարքավորումները գիտական կազմակերպություններին տրամադրելու համար մրցույթ է անցկացվելու, որը նախատեսվում է իրականացնել տարվա երկրորդ կիսամյակում:

«Գիտական սարքավորումների համար հատկացվող գումարի չափը չի ֆիքսվում, ընդհուպ կարող են լինել բարձր արժողությամբ սարքեր: Մարքի ձեռքբերման համար կարելու է սարքի կարելորությունը, առկայության դեպքում հնարավոր բեկումնային հետեւանքները, շահագրգիռ կազմակերպությունների քանակը եւ այլն: Ծրագրի կարելուր նախապայմաններից է տարբեր շահագրգիռ կազմակերպությունների կոնսուրցիումների ձեւավորումը, որպեսզի սարքերն օգտագործվեն համատեղ: Շահագրգիռ կառույցներ կան,

որոնք եւս ցանկանում են գիտահետազոտական աշխատանքներ կատարել ադ սարքով: Շահագրգիռ կառույցները կարող են լինել տարբեր գերատեսչություններ, գիտական այլ կազմակերպություններ: Շահող գիտական կազմակերպությունը պարտավոր է իր ինտերնետային կայքում տեղադրել տվյալ սարքից օգտվելու ընթացակարգերը՝ ժամանակացույցով եւ այլն, որպեսզի շահագրգիռ կառույցները եւս տեղեկանան եւ կարողանան օգտվել սարքից», - ասաց նա եւ ավելացրեց.

«Հետագայում նախատեսում ենք, որ ընդհանուր օգտագործման սարքերի կենտրոններ լինեն, որոնք կարող են տեղակայվել եղած գիտական կազմակերպություններում: Օրինակ՝ մի գիտական կազմակերպություն արդեն ունի բավականաչափ թարմացված ենթակառուցվածքային բազա, դրան ավելացնելով անհրաժեշտ այլ գիտական սարքավորումներ՝ մենք կարող ենք ունենալ համապարփակ գիտական սարքավորումների կենտրոն, որտեղից կարող են օգտվել ոլորտի այլ գիտական կազմակերպությունները:

Քանի որ սարքավորումները կարող են լինել նաեւ համեմատաբար թանկ եւ եզակի, ապա անհրաժեշտություն է դառնում ադ սարքավորումների վրա աշխատողների վերապատրաստումը: Չնայած ցանկացած սարք գնելու դեպքում, գնի մեջ ներառվում է վերապատրաստման ծառայությունը, բայց եթե վերապատրաստում չի իրականացվում, Գիտության կոմիտեն կվճարի կազմակերպությանը, եւ այն կիրականացվի: Ընդ որում, վերապատրաստումները կարող են իրականացվել թե՛ այստեղ՝ մասնագետներին հրավիրելով մեզ մոտ, թե՛ տվյալ սարքն ունեցող արտասահմանյան ինչ-որ գիտական կազմակերպությունում»:

Թեմատիկ գիտական հետազոտությունները դրամաշնորհային մրցույթներով են: Դրանց հատկացվող լրացուցիչ ֆինանսական միջոցները նպատակաուղղված են մեծացնելու երիտասարդների դերը ոլորտի զարգացման գործում, բարձրացնել գիտական աշխատողի վարկանիշը եւ հետաքրքրություն առաջացնել երիտասարդների մեջ գիտության նկատմամբ: Հատկացվող ֆինանսական միջոցներով նախատեսվում է.

- *Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների քանակը ավելացնել շուրջ 50-ով*: Այն կնպաստի գիտության ոլորտում կադրերի ներգրավմանը եւ ամրապնդմանը: Գումարը հատկացվելու է գիտական փորձաքննության արդյունքում բարձր միավոր հավաքած դիմողներին:

- *Գիտական խմբերի մեկնարկային մրցութային ծրագրի քանակը ավելացնել շուրջ 8-ով*: Այս մրցույթի իրականացումը կապահովի բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողի աշխատանքը խրախուսելու համար: Խումբը պետք է ունենա արտերկրի հեղինակավոր գիտնական ունեցող խորհրդատու, իրականացնի հավակնոտ թեմայով հետազոտական ծրագիր եւ գիտական աշխատանքը տպագրի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում:

Առաջատար գիտաշխատողներին աջակցության մրցութային ծրագրով կտրամադրվի շուրջ 50 դրամաշնորհ՝ մինչև 5 տարի ժամկետով: **Նոր ներդրվող ծրագիրը** թույլ կտա օգտագործել հայաստանյան առաջատար գիտնականների ներուժը. «Ծրագրով մեր մրցունակ, ուժեղ գիտնականները, որոնք ունեն վերջին 10 տարվա շատ լավ անցած ակադեմիական ուղի, միջազգային մրցունակ գիտական արդյունքներ, տպագրված հոդվածներ, պետք է ձեռավորեն մինչև 7 հոգանոց հետազոտական խմբեր եւ հավակնոտ, բեկումնային թեմայով հետազոտական ծրագրերի իրականացնեն: Այսինքն՝ ոչ թե սովորական գիտական խնդիրներ, այլ երկրի տնտեսության կախիքներից բխող, ֆունդամենտալ գիտության մեջ հավակնոտ, եվրոպական մակարդակի մրցունակ թեմաներ», - նշեց գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալը:

Երկակի հետազոտությունների մրցութային ծրագրերի քանակը կավելացվի շուրջ 10-ով: Դրամաշնորհները տրամադրվելու են ռազմական ուղղվածության հետազոտական թեմաներին: Հետազոտությունները հանրապետության անվտանգության համար ունեն մեծ նշանակություն: Դրամաշնորհները տրամադրվելու են բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերական կոմիտեի հետ համագործակցությամբ:

«Կարելու է այն, որ մրցույթում ֆիքսել ենք հստակ ճանապարհ՝ գաղափարից մինչև շուկա: Քանի որ ռազմարդյունաբերության կոմիտեն ունի նաև իր բյուջեն եւ այն ծրագրերը, որոնք հաջողությամբ կավարտեն Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ, իրենք շանս են ստանալու շարունակել արդեն ռազմարդյունաբերության կոմիտեի բյուջեով», - ասաց Արթուր Մովսիսյանը:

Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցութային ծրագրերի քանակը կավելացվի շուրջ 10-ով: Ծրագիրը կարելու ուղղություն է տնտեսության զարգացման տեսանկյունից:

Դրամաշնորհները տրամադրվելու են տնտեսության կարիքներից բխող կիրառական հետազոտություններով զբաղվող գիտական խմբերին՝ 25 տոկոսի չափով մասնավոր հատվածից համաֆինանսավորման առկայության պայմանով: Ծրագիրը իրականացվելու է Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ:

«Այստեղ ունիկալությունն այն է, որ սովորաբար ծրագիրը երկու տարով է արվում, հիմա մենք նախատեսում ենք այն իրականացնել 3 տարի ժամկետով: Սա կատարվում է, որպեսզի այդ հետազոտության արդյունքը, պրոդուկտը դեպի շուկա մտնելու ճանապարհ ունենա», - պարզաբանեց Մովսիսյանը:

Մարիամ Գեորգյան